ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» սեպտեմբերի 2014թ. N 268-Ա/3

ԱՆՈՒՇ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետի և 5-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի օգոստոսի 8-ի 01/13/5/2912-14 գրությունը և Անուշ Դանիելյան 2014 թվականի օգոստոսի 28-ի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետի (պաշտոնի ծածկագիր՝ 25-2.2-22) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Անուշ Դանիելյանի հետ 2014 թվականի սեպտեմբերի 4-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.Աշխատավարձը՝ համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ